ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս տարվանից սկսվում է գիտական նոր պարբերականի՝ «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի հրատարակությունը:

Հայ ժողովրդի անցած ուղու, մշակութային արժեքների լավագույն վկայությունը հայոց լեզուն է: Այն այսօր դարձել է Հայաստանի Հանրապետության պետական լեզուն և իր գրական նորմավորվածությամբ ունի ավելի մեծ հնարավորություն՝ ծառայելու մեր հանրության հասարակական և քաղաքական, գիտական և մշակութային, ինչպես նաև կյանքի մյուս բնագավառների հաղորդակցական գործառությունների իրականացմանը:

Նոր պարբերականի նպատակն է անդրադառնալ առհասարակ լեզվի և լեզվաբանության առանցքային և զարգացման հեռանկարի տեսակետից առավել ուշագրավ խնդիրների և հարցերի լուսաբանմանը: Դրանք լույս կտեսնեն առանձին հոդվածների, գիտական բանավեճերի և քննարկումների, ինչպես նաև հրապարակումների ու հաղորդումների ձևով: Հանդեսն ունենալու է նաև գիտական կյանքը լուսաբանող, ինչպես նաև գրախոսությունների բաժիններ:

Հայոց լեզվի և հայերենագիտության հարցերը տարբեր ժամանակներում եղել են հայերեն և այլ լեզուներով լույս տեսնող գիտական հանդեսների հրապարակումների մի մասը: Եվ այսօր առանձին պարբերականի հրատարակումը կարևոր է, որովհետև գնալով մեծանում է գիտական հետաքրքրությունը հայոց լեզվի նկատմամբ, հայ լեզվաբանական մտքի ձեռքբերումները դառնում են անհրաժեշտ ուսումնասիրության առարկա: Գրական հուշարձաններով հարուստ հայերենը մեծ

կարևորություն է ներկայացնում մյուս լեզուների պատմական անցյալի վերհանման տեսակետից:

Տպագրության արժանի նյութերը լինելու են ոչ այնքան ծավալուն, որքան սեղմ և նպատակային՝ վերհանելու ժամանակակից լեզվաբանության, մասնավորապես հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառի նոր ձեռքբերումները, նպաստելու այն խնդիրների լուծմանը, որոնք ծառայելու են հայերենագիտության զարգացմանը:

«Լեզու և լեզվաբանություն» հանդեսի խմբագրությունը հուսով է, որ հայոց լեզվի և նրան հարակից հարցերի ուսումնասիրությամբ զբաղվող լեզվաբանների և հայերենագետների մասնակցությամբ կարելի է առաջ մղել հայ լեզվաբանական մտքի հետագա զարգացումը: